ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30.11.2012թվականի համար 21-Ն
գ. Ղուկասավան

ՀԱՍՏԱՏԵԼ 2013թ. ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով՝

Համայնքի ավագանին **որոշում է.**

Հաստատել 2013թ. համար սահմանված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային), ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500դրամ:

2) սույն կետի 1- ին ենթակետի «ա» պարբերության չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000դրամ,

բ. 501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000դրամ,

գ. 1001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000դրամ,

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500դրամ,

բ. 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500դրամ,

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, վերականգնման արդիականացման աշխատանքների (բացառությամբ << օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված է ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործածական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից նախատեսվում է նաև կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործածական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործածական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ սենքերի գերծածական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով, այն

համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառում են նոր շինարարության սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է 2500դրամ:
4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
   1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակ՝ 3000դրամ:
   2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակ՝ 3000դրամ:
5. Համայնքի տարածքում՝
   1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ:
   2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների, վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 դրամ:
   3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30000 դրամ:
6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբեկտները, բաղնիքները սաունաները/, խաղատները ժամը 24^{00}-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
   1) առևտրի օբեկտների համար՝ 25000 դրամ:
   2) հանրային սննդի և զվարճանքի օբեկտների համար՝ 50000դրամ:

3) բաղնիքի /սաունաների/ համար՝ 200000 դրամ:

4) շահումային խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ:

7. Համայնքի տարածքում /բացառությամբ թաղային համայնքների/ մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10000 դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է 2000դրամ:

9. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել - 2000 դրամ:

10. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել – 2000 դրամ:

Ավագանի՝

կողմ (7)	դեմ(0)	ձեռնպահ(0)

Այբերտ Մովսիսյան

Աշոտ Սարգսյան

Խաժակն Սարգսյան

Ավետիք Մարկոսյան

Աբրահամ Համբարձումյան

Գոգո Թամոյան

Յուրիկ Մելքոնյան

ՂՈՒԿԱՍԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

30. 11. 2012թ.
գ. Ղուկասավան